

քաղէտ հանճարովը կրնայ միցիլ եւրոպիոյ մեծանուն հնացեալ քաղաքագիտաց հետ, իսկ վաճառականական շահագիտութեան մասին կրնայ իրացնէ օրինակ ըլլալ ամենուն: Պապուն աւանդութիւններէն սորված է ամեն բանի մէջ մենավաճառ ըլլալ, և հօրենական իրրեւ առանձին ստացուածք ընդարձակ արգասարբեր կալուածներ ունենալուն, ինքը կը կանոնադրէ տեղափոխութեանց կերպը, սակարկութիւնը ու գինը, որով ոչինչ կամ քիչ բան կը մնայ հպատակացը. անոր համար հողագործաց վիճակն շատ խեղճ է յեգիպտոս: Բայց խոստովանելու է զարձեալ որ ժողովուրդն է մասամբ մ'իր թշուառութեան պատճառը. վասն զի նոր ու օգտակար փոփոխութեանց դէմ կը դնէ, և ամենեկին չուզեր խոտորիլ իր նախնեաց սովորութենէն:

Եգիպտոս այս մէկ քանի վերջին տարիներուս մէջ շատ յառաջադիմեց ի վաճառականութեան և ի ձեռագործարուեստս: Երկաթուղիք ու հեռագիրք կենդանացուցին իրենց երկանկաբեր թեյերովն ու գիծերով՝ այդ երկարժամանակեայ մեռեալ բնութիւնը ու երկիրը. նեղոս ի բազում կողմանս կամուրջներով ու շոգենաւներով ընդ մէջ կարեցաւ. գլխաւոր քաղաքներն՝ Ալեքսանդրիա ու Գահիրէ օր ըստ օրէ միշտ աւելի ծաղկեցան ու զարգացան, և Ուիւէզի ջրանցքը շատ մ'աննըպան գեղեր ու աւաններ կերպարանափոխեց ի քաղաքս և ուրիշ նորեր կանգնել տրւաւ: Ո՛վ է այս ամեն բաներն ի զլուխ տանողը. իսմայէլ փաշային ու իր պաշտօնէից անյողդողդ ու աննըկուն գործունէութիւնը:

Իսմայէլ փաշայն ուրիշ շահաւէտ ձեռնարկութեան մ'ալ ձեռք զարկաւ ու կատարեց. այն է Սամուէլ Պէյքըրի առաջնորդութեամբ ընել տուած գիւնտորական արշաւանքն ի վերին Նեղոս, որուն պատմութիւնն աւանդեցինք մեր ընթերցողաց ի Պրակիս յորում վաճառականական օգուտ մը կը գիտէր փոխարքայն:

Իսմայէլ փաշայն միջահասակ է, կարմրամորուս և կարմրահեր. իսկ աչքերը փոքր են և երկնագոյն: Շատ մարդասէր ու քաղաքավար է առ օտարս, զորս կ'ընդունի քաղցրութեամբ ու վայելչութեամբ: Միշտ հետամուտ եղած է անկախ ըլլալ ի Բ. Դրանէ. ուսկից շատ արտօնութիւններ ընդունած է, որոնք մերժուած էին իր նախորդացը: Օսմանեան պետութիւնը շնորհեց իսմայէլին ընտանեացը իրաւունք ուղիղ յաջորդութեան, խելով տիտղոսը և Բարնառքիւն պատուանունը: Բայց նա այսչափով գոհ չըլլալով, փորձեց իրաւունք ունենալ առանց գիտութեան կամ թոյլտուութեան օսմանեան պետութեան փոխառութիւններ ընել, և ըստ կամաց նաւազել և առաւելուլ ծովային ու ցամաքային զինուորութիւնը:

Իսմայէլ փաշային որդին ժառանգ իշխանն, որ հիմա քսան և մի ամեայ պիտի ըլլայ, կատարած է իր ուսման ընթացքը յեւրոպա, և կրթուած ըստ եւրոպական քաղաքակրթութեան, որ մեծ յոյս կու տայ և կրնայ արժանաւոր յաջորդ մ'ըլլալ իր հօրը: Բարեբախտ է Եգիպտոս որ ունի այսպիսի իշխաններ, որոց նպատակն է յառաջագիմութիւն ու երջանկութիւն իրենց հպատակացը:

Փ Ո Ք Ր Ա Ս Ի Ռ Յ Ս Ո Վ Ը

Դժբախտաբար գրեթէ տարի չանցնիր որ աշխարհիս այս կամ այն կողմը թշուառութիւն մը չպատահի. կամ պատերազմ պիտի ըլլայ կամ ժանտաւմահ, և կամ քոլեռա, որոնք իրարմէ աւելի ահաւոր են. բայց ահաւորագոյն ևս է տարւոյս ճակատագրեալ այցելուն՝ սովը, այն մարդածախ թշնամին որով կը տառապին Անգղիական Հընդկաստան և Փոքր Ասիա: Գէթ երջանիկ է Հնդկաստան, եթէ կրնայ ըլլալ ա-

դետից մէջ երջանկութիւն . վասն զի անգղիական տէրութեան փութալն զօրաւոր խնամակալութիւնը կը թե-
թեցնէ զգալի կերպով հարուածոյն սաստկութիւնը , մինչդեռ փոքր Ասիոյ մէջ այս կամ այն պատճառաւ կամ դժարութեամբ՝ քիչ դարման կը մատու-
ցուի տէրութեան կողմանէ : Անգղիոյ մարդասիրական ընկերութիւնն , իր հպատակաց օգնելէն զատ , ուզելով ըստ կարի օտարաց ալ ձեռնտու ըլլալ մարդասիրութեամբ , զրկեց իր մէկ անդամակիցն 'ի փոքր Ասիա , Ֆարնս-
վորտհ անուն (Farnsworth) , որ ուղեւ-
րելով այդ վատաբախտ աշխարհաց մէջ , այս ցաւալի տեղեկութիւնները կ'աւանդէ իր աւագորդաց :

Այս երկիրը , կ'ըսէ Ֆարնսվորտհ , օս-
մանեան կայսերութեան շտեմարանաց մէջ ամենէն հարուստն ու արգասա-
բերն է , և բաւական՝ ամբողջ Եւրոպիոյ ցորեան մատակարարելու . բայց պատ-
ճառաւ յարաբերութեան ճանապարհ-
հաց բացարձակ պակասութեան կամ սակաւութեան 'ի ծովէ կ'արգելուի ինչ և է վաճառականութիւն . և այս դժա-
րութեան համար տեղացիք իրենց պէտք եղած քանակէն աւելի ցորեան չեն սերմաներ . և համբարանոցաց կամ տեղւոյ քիչութեան պատճառաւ նորա-
հաս ցորեանը հնձելէն ետքը՝ նախըն-
թաց ամին նախապահեատ ցորեանը կը ստիպուին ջուր թափել , եւ ահա կը պատահի տարի մը՝ որ ամառուան սաս-
տիկ չորութեան և ձմեռուան խստու-
թեան պատճառաւ , ինչպէս նաեւ ֆրը-
դաց վայրենաբարոյ աւարառու արշա-
ւանաց , և գաւառական իշխանութեանց խեղճ մատակարարութեան յետին ա-
դետից մէջ կ'ընկնայ այնպիսի աշխարհ մը՝ որուն բնութիւնը բազմաբեղուն երկիր մը չնորհած է , որով կը խափա-
նուի շատ տարիներ ոչ միայն բնակչաց դիւրակեցութիւնը , այլ և կենաց կա-
րուոր պէտքը :

Ուղեւորին աչքին զարնող առաջին բանն ժողովրդեան նուազիւն կ'ըլլայ մահուամբ կամ պանդխտութեամբ : Սո-

վայրուկ տանուտէրն քանի որ պղնձէ տապակ մ'ունէր , անկողին , ծածկոց , ոչխար մը կամ այծ , ինչ և իյէ չարիքն նուազ էր , վասն զի կը ծախէր և անով հաց կը գնէր , ոգի տալու իր հիւծեալ ամուսնոյն և որդւոցը . բայց կը հասնի վայրկեան մը՝ որ կը պակասին այդ ա-
մենայն միջոցը , և յայնժամ տունն ալ կը կործանէ յետին յուսահատու-
թեամբ , որպէս զի փայտերը ծախէ և անով դրամ ճարելով պանդխտի յո-
տարութիւն : Իսկ գաղթիչ չկրցողնե-
րը , երեսէ թողուած տանց բոլոր փայ-
տերը կ'այրեն՝ իրենք զիրենք ցուրտէն պաշտպանելու համար . ուստի տէրերն երբ դառնան իրենց հայրենի ծննդեան երկիրը՝ տուն պիտի չգտնան . և այս կերպով ահաւասիկ հազարաւոր տու-
ներ կը կործանին , որպէս զի քիչ մը կրակ հայթհայթեն գէթ ցրտոյն սաստ-
կութենէն չմեռնելու չափ :

Տունը ու բնակութիւնը , արտոյաք ու այդեստանը բոլոր անապատ ու ան-
մշակ թողուած են . մահուան ահաւոր պատկերը կարծես զրաւած է բոլոր երկրին երեսը : Գաղթականաց հեղեղն կը գիւմէ 'ի Սըւազ , Կեսարիա և Տար-
սոն , և կը ծանրանան բնակչաց վրայ : Ի Սունկուրլու՝ որ վիճակի մը գլխաւոր կենդրոնական տեղին է , անցեալ տա-
րւոյն Պարսկաստանի սովոյն ամենա-
խեղճ տեսարանքն նորոգուեցան : Տե-
ղւոյն քաղաքապետն կը պատմէ մեր ուղեւորին , թէ աւելի քան 5000 մարդ-
իկ մեռեր են 'ի սովոյ , առանց համ-
րելու զանոնք որ ուրիշ կողմերէ Սուն-
կուրլու ապաւիններ էին և մեռան : Կեն-
դանի մնացողը չեն հասնիր մեռեալնե-
րը թաղերու . անանկ որ դիակներն ամբողջ օրեր ճանապարհաց վրայ կը թողուին ու կը պատառին 'ի շանց : 300 տուն կործանեցաւ , որպէս զի անոնց փայտովը կրակ հայթհայթեն : Ոսկե-
գործին մէկը բոլոր ունեցածը ծախեց , տունն ու կրպակը 350 լուրուշի , որպէս զի հաց ճարէ ընտանեացը տասուեր-
կու օրուան համար միայն :

Ի ֆայա-տիպի , որ 50 կամ 60 տու-

նով պատի գիւղ մ'է, չորս փարսախ հեռու 'ի Սունկուրլուէ, 100 հոգիէ աւելի մարդիկ մեռան 'ի սովոյ: Հայր մը պատմեց Ֆարնավորտհի, թէ իր հինգ որդւոց չորսը օր քան զօր կը ծիւրին 'ի քաղցոյ, իսկ հինգերորդը մեռնելու վրայ է: Ի ֆայա-տիպի ուղտի մը զիւակը մեռնելէն ետքը քառասուն օր աւստի մէջ մնացեր էր. և երբ դուռը բացին որպէս զի 'ի բաց տանին հօտեալ գէշը, բոլոր ժողովուրդը վրան թափեցաւ, և կտոր կտոր յափշտակելով փախաւ: Քաղաքապետը հարկաւորեցաւ պահապան դնել մեռեալ մարմինը թաղուած տեղոյն վրայ, վասն զի բոլոր կերողները մեռեր էին:

Ամբողջ գեղեր ու աւաններ անապատացան ու անմարդացան. 'ի Նէֆէս, քէօյի, հինն Տաւիա, երեք տղայ միայն գտնուեցան, որոց երիցագոյնը տասնամեայ. և երեքն ալ մեռած էին: Պ. Ֆարնավորտհ վեց գեղ գտաւ, որոց հինգը բոլորովին անմարդացեր էին, և վեցերորդին մէջ երեք ընտանիք միայն մնացեր էր: Քսան և չորս ժամուց մէջ յորում կեցաւ ուղեւորն յԱք-սարայ գիւղ, չորս հոգի մեռան 'ի սովոյ չարչար նեղութեամբ:

Ահաւոր է նոյնպէս կենդանեաց մահը ու կոտորածը: Գիւղի մը մէջ որ 1600 ուխտար ու այծ կար, այնչափէն մէկ ուխտար ու մէկ այծ միայն ապրեցան. ուրիշ գիւղի մը մէջ ալ 1200 կենդանիք կային, անոնցմէ ալ ութ հատն միայն ապրեցան:

Մեն զժբախտութիւն, բայց գէթ ժամանակաւոր կամ տարեկոր ըլլար միայն. պանդըխտութիւնք, երկարաւուր ձմեռն և տարւոյս չորութիւնը յետագայ ամաց յաջող հնձոց ամեն հաւանակութիւնն 'ի դերե կը հանեն. ուստի կրնայ ամենայն ոք գուշակել թէ քանի տարի պէտք է գէթ մասամբ դարմանելու այս ամեն չարիքներն ու կորուստները:

Կրնան հարցնել ընթերցողք, թէ ինչ է այսպիսի թշուառութեան մը պատճառը, չարագոյն քան զպատե-

րազմ և զժամնտամահ. ուտելեաց պակասութիւնն. վասն զի երբ ուտելիք կը նուաղին, անոնց գինը կ'առաւելու և կը դադրի համեմատական ըլլալու գործաւորաց ոռոգիկն: Ուտելեաց պակասութեան պատճառն ալ է եղանակաց գէշութիւնը և հնձոց անյաջողութիւնը: Ասկէ զատ քաղաքական մեծամեծ շարժումնք ու պատերազմունք ալ կըրնան շատ կորուստներ պատճառել, ապականելով ընդարձակ տարածութեամբ երկիրներ: Փոքր Ասիոյ ներկայ սովոյն զխաւոր պատճառներէն մէկն ալ է անցեալ տարւոյն Պարսկաստանի սովը. ուր տարին վաճառականը շահագիտութեամբ երկիրն ցորենոյն մեծ մասը առանց մտածելու յաջորդ տարին. և զժբախտաբար եղանակն ալ անյարմար երթալով՝ յառաջ բերին այս ահաւոր սովը, որ կը տնէ տակաւին և չնք գիտեր թէ երբ պիտի վերջնայ:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ի ՄԵԾԱՆՈՒՆ ՆՆՋԵՑԵԱԼՍ

1873 ՏԱՐԻՈՅՆ

ՅՈՎՀ. ԿԱՎԱՅԻ ԿՈՄ, մոտենացի նշանաւոր գրագէտ, ծնեալ յամին 1806:

ՈՅՏԱՌՈՍ ԴԱՅՅԱ, պերկամացի ծերունի բանաստեղծ:

ՅՈՎԱԿԻՄ ՏԵ ԱՎՈՍԵՆՍ, գուրինեցի գրագէտ:

ՅՈՎՐԵԺ ՊԵՆԻ, կանոնիկոս, կաճառորդ ձեմարանին Գրուսգայի:

ԷՄԱՆՈՒԷԼ ՄԱՌԻԱՆԻ, իտալացի սինկղիտոս, գրագէտ և քաղաքագէտ:

ՅՈՎՐԵԺ ԴԻՄԵՐՄԱՆԻ, բիւմոնդեցի բժշկապետ:

ՄԻՔԵԶ, պատուացի երիտասարդ աստեղաբաշխ, տեսուչ զիտարանին Պրոնիոյ: ՊՈՆԱԿԵՆԻՈՒՈՍ ՄՈՆԻՆԻ, նէապոլսեցի երկրաբան:

ԿԱՐՈԼՍ ԳՈՅՁԻՍ, նովարացի երգահան: